# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15.05.2025 թ.

Շահումյան բնակավայր

2025 թվականի մայիսի 15-ին՝ ժամը 14:30-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՄԼ մայնինգ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արարատի մարզի Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 2-րդ տեղամասում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Հարությունյանը նշեց, որ համաձայն Օրենքի՝ օգտակար հանածոյի արդյունահանումը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ, քանի որ ունի ազդեցության ավելի մեծ աստիճան շրջակա միջավայրի բաղադրիչների վրա: Նա նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկայացրեց ՇՄՆ ԲՀՊՏ և կենսաբազմազանության վարչության, ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի և հիդրոէկոլոգիայի և կենդանաբանության գիտական կենտրոնի կարծիքները՝ կապված հայցվող տարածքում հանդիպող կարմիրգրքյան բուսատեսակների և կենդանատեսակների հետ: Վերջիններս նպատակահարմար չեն համարում ընդերքօգտագործումը նշված տարածքում, իսկ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը տարածքի շահագործումն առանց տեղի բուսականության մանրակրկիտ ուսումնասիրության համարում է անթույլատրելի: «ՄԼ մայնինգ» ՍՊԸ-ի տնօրենը նշեց, որ ներկայացրել են մասնագիտական եզրակացություն նշված կարմիրգրքյան տեսակների

վերաբերյալ, սակայն Հարությունյանը պատասխանեց, որ ներկայացված եզրակացությունը բավարար չէ, որպեսզի հերքվի նշված տեսակների առկայությունը հայցվող տարածքում, քանի որ դիտողությունների ամփոփաթերթում էլ նշվել է, որ մասնագիտական ընկերությունը այս ժամանակահատվածում սխալ է համարում հետազոտություններ իրականացնելը՝ կապված բուսական և կենդանական տեսակների սեզոնային առանձնահատկությունների հետ: Նա նշեց, որ տնտեսական զարգացումը շատ կարևոր է մեր երկրի համար, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաև բնապահպանական օրենսդրությունը և հարցին տալ այնպիսի լուծումներ, որի արդյունքում շահի տնտեսությունը՝ չվնասելով բնությանը:

Հարությունյանը նշեց, որ Օրենքի պահանջով կազմակերպվել է հանրային 2-րդ լսում, որի նպատակն է ազդակիր բնակավայրին և այլ շահագրգիռ անձանց մասնակից դարձնել փորձաքննության գործընթացին և լսել նաև նրանց կարծիքները: Նա ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողին:

«ՄԼ մայնինգ» ՍՊԸ-ի տնօրեն Էդուարդ Մարգարյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, ներկայացրեց աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շահագործման փուլում նախատեսվող աշխատանքները: Նա նշեց, որ գործունեության արդյունքում բացվելու են աշխատատեղեր: Նա նշեց նաև, որ պաշտպանության նախարարության կողմից ստեղծվել է հանձնաժողով և տարածքը ուսումնասիրվել է: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացում օրենքով սահմանված կարգով պաշտպանության նախարարությունից կարծիք չի ստացվել, ինչի արդյունքում կարծիքը համարվել է դրական:

Կարմիրգրքյան տեսակների վերաբերյալ Մարգարյանը նշեց, որ հնարավորություն չի եղել իրականացնել լրացուցիչ հետազոտություններ, քանի որ լրամշակման համար տրամադրված ժամանակը բավարար չէ: Հարությունյանը նշեց, որ լրամշակման համար տրամադրված ժամկետը բխում է Օրենքի պահանջից և դա հնարավոր կլինի փոխել միայն օրենսդրական փոփոխությունների արդյունքում:

Ք. Հարությունյանը խոսքը փոխանցեց Արտաշատ համայնքի ներկայացուցիչ Խաչիկ Պողոսյանին, քանի որ փորձաքննության գործընթացում համայնքապետարանի կողմից ստացվել էին առարկություններ: Ներկայացված առարկությունների մասով Պողոսյանը նշեց, որ ընկերության հետ լրացուցիչ քննարկվել են բոլոր հարցերը և այլևս առարկություններ չունեն: Նա նշեց, որ ընկերությունը պարտավորվել է համայնքին ու հենց ազդակիր բնակավայրին ցուցաբերել տարբեր բնույթի աջակցություն՝ սկսած ֆինանսականից մինչև սոցիալական, ինչպես նաև տեխնիկայի աշխատանքի տեսքով:

Հարությունյանը նշեց, որ լրամշակված հաշվետվության վերաբերյալ կան մի շարք դիտողություններ և պարզաբանման ենթակա հարցեր՝ կապված տեխնիկական ջրի ջրառի, կենդանիների միգրացիայի, մաքրման կայանի, ջրհեռացման առուների:

Մարգարյանը նշեց, որ առկա է ջրօգտագործման թույլտվություն, ինչին ի պատասխան Հարությունյանը նշեց, որ այն տրամադրվել է ընկերությանը միայն արտադրական նպատակով:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը առաջարկեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնել և հուզող հարցերը հնչեցնել:

Բնակիչների կողմից հարցեր չհնչեցին:

Քննարկվեցին նաև ազդակիր համայնքի բնակիչներին աշխատանքով ապահովելու և գործունեության հետ կապված այլ հարցեր:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, Արտաշատ համայնքի ներկայացուցիչը, Շահումյան բնակավայրի վարչական ղեկավարը և «ՄԼ մայնինգ» ընկերության գլխավոր տնօրենը:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«ՄԼ մայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն՝** **Է. Մարգարյան**